

Քամալեանց Ս.՝ «Ժամանակը ոսկի է», Լոպպին և Թաղաւորաղը, ազատ փոխադրութիւն Փ. Հոփմանից.

Պ. Ս. Քամալեանն արդէն ծանօթ է իր ժողովրդական հըրատարակութիւններով: Նա տուել է մի շարք հէքիաթներ ժողովրդական ընթերցանութեան համար:

Ներկայ փոխադրութիւնը նրա երկերի շարքի մէջ տասընմէկերորդն է: Նիւթը շատ պարզ է. մի փոքրիկ երեխայի՝ Լոպպիի կեանքի պատմութիւնն է այս: Արտաքոյ կարգի ընդունակութիւններով օժտուած Թափառաշրջիկ մանկանը մի իշխան մի օր հասկացնում է, թէ «Ժամանակը ոսկի է», և եթէ այն լաւ գործ դնես, անօգուտ տեղը չվատնես, վերջիվերջոյ կեանքի մէջ արտակարգ յաջողութիւն կ'ունենաս: Եւ ահա Թափառաշրջիկ Լոպպին այդ խրատը մեխի պէս գլխում ցըցած՝ ընկնում է աշխարհ բախտ որոնելու եւ նա յաջողեցնում է: Ախոռապանից և շնապանից սկսելով՝ նա իր հաստատամտութեամբ, ընդունակութեամբ, անդուլ աշխատասիրութեամբ կամաց-կամաց բարձրանում է և ի վերջոյ հասնում է Թաղաւորի խորհրդականի և պետութեան առաջին մարդու աստիճանին:

Այս գիրքը նորութիւն չէ հայ գրականութեան մէջ, ինքը փոխադրողը իր «ազդէ» մէջ յայտնում է, որ շատ տարի առաջ Թարգմանուած է գերմաներէնից հայերէն Ստեփ. Նաղաբեանի ձեռքով և հրատարակուած «Հիւսիսափայլ»-ում: Պ. Քամալեան իրաւացի կերպով գտել է, որ երկրորդ Թարգմանութիւնը անհրաժեշտ է, որովհետեւ «Հիւսիսափայլ»-ի լեզուն այժմ մատչելի չէ: Եւ ահա նա փոխադրել է Գերմանիայում շատ ծանօթ այս գրքոյկը, որ կարդացւում է հաճոյքով և հետաքրքրութեամբ: Սա յարմար գիրք է պատանիների ընթերցանութեան համար. նրանք այս գրքից կը քաղեն աշխատանքի, յարատեւ աշխատանքի ազնուացնող ներշնչումը, տոկունութիւն, սեփական խելքով և ձեռներեցութեամբ աշխարհում ճանապարհ հարթելու հպարտ զգացմունքը:

Կ. Հ.